ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 327 4 մարտի, 2013 թ.

ՄԵԾԱՐԳՈ
ՏԻՍՐ ԿԻՐԱԿՈՍ ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ
Քուվեյթ

Հարգելի Պրն. Գույումճյան,

Գոհունակությամբ ստացել ենք Ձեր նվիրաբերած գիրքը՝ «Կայաններ ու դիրքորոշումներ» խորագրով:

Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, որ ազգային-եկեղեցական մեր անդաստանում արդյունավոր ծեռնարկումների հետ մեկտեղ նախանձախնդիր եք նաև գրական գործունեությամբ, մամուլում Ձեր հոդվածների հրապարակումներով ներկայացնելու հայ-արաբական հարաբերությունները, արաբ ընթերցողին ծանոթացնելու հայ մշակույթին, ճարտարապետությանը, քանդակագործությանը, դպրության նվաճումներին:

Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Ձեր հեղինակած գիրքը արաբախոս աշխարհին տեղեկատվություն է մատուցում նաև հայ ժողովրդի պատմության, արցախյան հակամարտության, Հայոց Ցեղասպանության մասին: Գովելի է, որ զանգվածային լրատվամիջոցներով Դուք դեմ եք հանդես եկել թուրքական և ադրբեջանական դիվանագիտության տարածած ապատեղեկատվությանը՝ Ղարաբաղյան հարցի, Հայոց Ցեղասպանության առնչությամբ, ներկայացնելով Ղարաբաղին և հայությանը վերաբերող ճիշտ տեղեկություն, շեշտելով հայության տեսակետը արցախյան հիմնախնդրի մասին:

Աղոթում ենք, որ Աստված պահի ու պահպանի Ձեր բարեպաշտ ընտանիքը, շնորհի հաջողություններ ազգանվեր ու եկեղեցասեր Ձեր գործունեության մեջ և պարգևի քաջառողջություն, կյանքի երկար, արևառատ տարիներ:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ